Սեմինարիաների և կրոնի ինստիտուտների նպատակը

Մեր նպատակն է օգնել երիտասարդներին և երիտասարդ չափահասներին հասկանալ Հիսուս Քրիստոսի ուսմունքները և Քավությունը և ապավինել դրանց, արժանի լինել տաճարի օրհնություններին և պատրաստել իրենց, իրենց ընտանիքներին և մյուսներին իրենց Երկնային Հոր հետ հավերժական կյանքին:

Մեր նպատակին հասնելու համար.

Ապրել

Մենք ապրում ենք համաձայն Հիսուս Քրիստոսի ավետարանի և աշխատում ունենալ Հոգու ընկերակցությունը: Մեր պահվածքը և հարաբերությունները օրինակելի են տանը, դասարանում և համայնքում: Մենք շարունակ աշխատում են կատարելագործել մեր գործելակերպը, գիտելիքը, մոտեցումները և բնավորությունը:

Ուսուցանել

Մենք ուսուցանում ենք ուսանողներին ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, ինչպես դրանք տրված են սուրբ գրություններում և մարգարեների խոսքերում: Այդ վարդապետությունները և սկզբունքները ուսուցանվում են այնպիսի եղանակով, որը տանում է դեպի ըմբռնում և շինություն: Մենք օգնում ենք ուսանողներին իրականացնել իրենց դերը ուսումնական գործընթացում և պատրաստվել ուսուցանել ավետարանը մյուսներին:

Կառավարել

Մենք պատշաճ ձևով ենք կառավարում մեր ծրագրերը և միջոցները: Մեր ջանքերը օգնում են ծնողներին կատարել ընտանիքներն ամրացնելու իրենց պարտականությունը: Մենք սերտորեն աշխատում ենք քահանայության ղեկավարների հետ, հրավիրելով ուսանողներին մասնակցել և ապահովելով հոգևոր միջավայր, որտեղ ուսանողները կարող են շփվել միմյանց հետ և սովորել միմյանցից:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2009, 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Անգլերենի հաստատումը. 3/12 Թարգմանության հաստատումը. 3/12
The Objective of Seminaries and Institutes of Religion-ի թարգմանությունը Armenian. PD00002064 201